

ՉԵՄ ՅՈՒՍԱՀԱՏՈՒԻ...

Անմիտ խուժանը թո՛ղ ինձ հալածէ...
Թող որչա՛փ կուգէ նախատինք կարդայ,
Իմ մատաղ գլխին փոթորիկ բերէ,
Փոյթ չէ՛ ինձ համար թող փրփրի գոռա՛յ...

Ոչինչ ինձ համար ալիքներ, հողմեր
Փայլակ ու կայծակ, շանթ ու փոթորիկ.
Ոչինչ ինձ համար այդ երեւոյթներ
Թող որչափ կուգէ մինչէ՛ մըրիկ.

Ձե՛մ յուսահատուի. թող գոռ ալիքներ
Ջարնեն, փրփրեն, նաւ տափտանուի.
Թող որչափ կուգեն խփեն ինձ հողմեր
Կամքս—որպէս ժայռ ամո՛ւր կը կանգնի.

Ձե՛մ յուսահատուի ձեռքեր կարկառած
Դէպի՛ ոսկեշող սուրբ ճշմարտութիւն,
Թառաջ կընթանամ. թէկուզ փրփրած
Այն վայրի ամբոխ. ոչինչ այն գոռին...

Հոգոյս խորանում կայծն է վառուած,
Օ, որքան անբիծ, յուսաշող, փայլուն.
Սուրբ ճշմարտութեան դրօշը պարզած,
Կը ճեղքեմ արի՛ այն ծովը անհուն...

Տեսնում եմ ծովի այն կողմը փարոս,
Վստահ նետում եմ ես խորն անդունդին
Թէկուզ անհո՛ւն է... անծայր ովկիանոս,
Սակայն կը հասնեմ ես այն լոյս ափին...

Յ. ԽԱՆՆԱՐԵԱՆ